

5.7. Ստանդարտացումը, սերտիֆիկացումը, հավատարմագրումը 2004թ. հունվար-սեպտեմբերին

Ըստ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության ամփոփ տեղեկատվության, 2004թ. հունվար-սեպտեմբերին ստանդարտացման, սերտիֆիկացման, հավատարմագրման և նորմատիվ փաստաթղթերի պարտադիր պահանջների պահպանման պետական վերահսկողության ոլորտներում իրականացված գործունեությունը բնութագրվել է հետևյալ ցուցանիշներով.

Ստանդարտացում: Ընդունվել և պետական գրանցում է ստացել ազգային 98 ստանդարտ: ՀՀ տարածքում գործադրվել են 68 միջպետական, 22 միջազգային և 8 ՀՀ ստանդարտներ: Պետական գրանցում է ստացել արտադրանքի վերաբերյալ ՀՀ տեխնիկական 297 պայման: Թողարկվել են 11 անուն տեղեկատվական նյութեր՝ ստանդարտների համացանկ, տեղեկատու, տեղեկատվական թերթիկներ:

Սերտիֆիկացում: Տրվել է համապատասխանության 4936 սերտիֆիկատ, այդ թվում ներմուծվող արտադրանքի համար՝ 4220, արտահանվող արտադրանքի համար՝ 182, մնացած 534-ը՝ տրվել է ՀՀ-ում արտադրվող սերիական արտադրանքի համար: Մերժվել է արտադրանքի սերտիֆիկացման 21 հայտ, որից 10-ը՝ արտադրանքի անհամապատասխանության պատճառով:

Հավատարմագրում: ՀՀ տարածքում հավատարմագրվել է սերտիֆիկացման 11 մարմին և 28 լաբորատորիա (20-ը՝ տեխնիկապես իրավասու և անկախ, 9-ը՝ տեխնիկապես իրավասու):

Ստանդարտացման, սերտիֆիկացման, հավատարմագրման գործունեության հիմնական ցուցանիշները

	2004թ. հունվար-սեպտեմբեր			
	ընդամենը	աճը կամ նվազումը 2001թ. հունվար-սեպտեմբերի համեմատ (նվազումը «-» նշանով), %	աճը կամ նվազումը 2002թ. հունվար-սեպտեմբերի համեմատ (նվազումը «-» նշանով), %	աճը կամ նվազումը 2003թ. հունվար-սեպտեմբերի համեմատ (նվազումը «-» նշանով), %
Ընդունված և պետական գրանցում ստացած ազգային ստանդարտների քանակը	98	- 44.3	75.0	- 25.2
Պետական գրանցում ստացած տեխնիկական պայմանների քանակը	297	13.4	33.2	33.2
Թողարկված տեղեկատվական նյութերի քանակը	11	- 21.4	57.1	2.2 անգամ
Տրված համապատասխանության սերտիֆիկատների քանակը	4936	26.5	32.3	43.9
այդ թվում				
ներմուծվող արտադրանքի համար	4220	50.8	44.3	58.2
արտահանվող արտադրանքի համար	182	- 53.9	28.6	- 53.7
Արտադրանքի սերտիֆիկացման մերժված հայտերի քանակը	21	- 22.2	10.5	50.0
ՀՀ տարածքում հավատարմագրված լաբորատորիաների քանակը	28	86.7	4.0 անգամ	2003թ. հունվար-սեպտեմբերին լաբորատորիաների հավատարմագրում չի արձանագրվել

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Անորակության պատճառով չսերտիֆիկացված արտադրանք: 2004թ. հունվար-սեպտեմբերին անորակության պատճառով չեն սերտիֆիկացվել ներմուծված և ՀՀ-ում արտադրված արտադրանքի մի շարք տեսակներ:

2004թ. հունվար-սեպտեմբերին անորակության պատճառով չսերտիֆիկացված արտադրանքը

Երկիրը	Արտադրանքի անվանումը	Արտադրանքի մոդելը, տիպը	Քանակը
Բրազիլիա	Սուրճ բնական, հատիկավոր, չբոված	-	120 կգ
Ռուսաստանի Դաշնություն	Ձկան խավիար (կարմիր)	«Ախս-Կավիար» «Սախալինսկայա իկորնայա Կո» «Պար Սախ»	2.8 կգ 4 կգ 5.6 կգ
ԱՄՆ	Ատամի մածուկներ Շամպուններ	-	243.582 կգ 76.2 լ
Անգլիա	Ոչ էթիլացված բենզին	-	46062 կգ
Հայաստան	Պահածոյացված մանդակ, սիբեխ, բանջար ապակյա բանկաներով	-	4500 բանկա
Լատվիա	Ձկան պահածոներ	«Սելդ տոմատի սոուսում» «Սկումբրիա յուղի մեջ»	21.84 կգ 23.04 կգ
Ուկրաինա	Կերակրի աղ	-	2800 կգ
Վաճառող «DORAGI Co Ltd»ՈՒԻ	Դիզելային վառելանյութ	-	22880 կգ
Հայաստան	Համեմունք	Չորացված ռեհան	-